


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2013թ. հունվարին


/վերլուծություն/

2013թ. հունվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 9939 գործարքներ, որոնց քանակը 2012թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 45.3%-ով, իսկ 2012թ. հունվարի համեմատ աճել՝ 2.0%-ով:

2013թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3095 օտարման գործարքների 77.2%-ը կազմել են առուվաճառքները, 22.3%-ը՝ նվիրատվությունները և 0.5%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 35.5%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 33.9%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2013թ. հունվարին, 2012թ. դեկտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 35.1%-ով, իսկ 2012թ. հունվարի համեմատ՝ 17.9%-ով:

2013թ. հունվարին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 58.6%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2013թ. հունվարին, 2012թ. դեկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 37.7%-ով, իսկ 2012թ. հունվարի համեմատ՝ 29.9%-ով:

2013թ. հունվարին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	հունվար 2012թ.	հունվար 2013թ.	դեկտեմբեր 2012թ.
Կենտրոն	400790	422050	421000
Արաբկիր	335300	350000	349500
Քանաքեռ-Զեյթուն	260800	279100	278000
Նոր-Նորք	226908	243050	242850
Ավան	236248	255000	250000
Էրեբունի	234930	243500	242600
Շենգավիթ	230464	249100	248200
Դավթաշեն	255952	269100	268500
Աջափնյակ	221586	24050	239000
Մալաթիա-Սեբաստիա	220700	235000	234100
Նուբարաշեն	140100	145100	145000
Միջինը Երևանում	251200	266400	265300

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. հունվարին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. դեկտեմբերի համեմատ, աճել են 0.4%-ով:

2013թ. հունվարին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 302 բնակարաններ, որոնց քանակը, 2012թ. հունվարի համեմատ նվազել է 23.7%-ով, իսկ 2012թ. դեկտեմբերի համեմատ՝ 7.1%-ով:

2013թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հունվար 2012թ.	հունվար 2013թ.	դեկտեմբեր 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	107246	114000	114000
	Ապարան	50451	54000	53000
	Թալին	62906	62300	61500
Արարատ	Արտաշատ	91600	94200	94200
	Մասիս	107742	112000	112000
	Վեդի	100138	98500	98500

	Արարատ	71682	75100	74500
Արմավիր	Վաղարշապատ	144109	153200	153200
	Արմավիր	114700	119200	119200
	Մեծամոր	85706	86500	86500
Գեղարքունիք	Սևան	97219	99000	99000
	Գավառ	55986	58200	57500
	Մարտունի	106493	107400	107400
	Վարդենիս	34005	42050	41500
	Ճամբարակ	22914	26100	25950
Լոռի	Վանաձոր	82335	87200	87200
	Ստեփանավան	80115	74500	74500
	Սպիտակ	103267	99800	99800
	Ալավերդի	51183	54500	53200
	Տաշիր	45787	44100	43900
	Թումանյան	12500	11000	11000
	Շամլուղ	8300	8000	8000
	Ախթալա	19700	19800	19800
Կոտայք	Աբովյան	144900	153200	153200
	Նոր Հաճն	127926	128500	128500
	Բյուրեղավան	106966	107100	107100
	Եղվարդ	108963	109300	109300
	Հրազդան	57538	62500	61800
	Ծաղկաձոր	300827	292500	292500
	Չարենցավան	82401	84000	84000
Շիրակ	Գյումրի	99550	109300	109300
	Արթիկ	62982	66300	65200
	Մարալիկ	35782	40100	39500
Սյունիք	Գորիս	116339	117100	116800
	Կապան	88903	90200	90200
	Սիսիան	79784	89050	88500
	Մեղրի	68500	76200	75000
	Ագարակ	39700	44200	44200
	Քաջարան	106302	94300	94300
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	81501	92500	91400
	Եղեգնաձոր	128532	119500	118700
	Ջերմուկ	84989	110500	109200
Տավուշ	Դիլիջան	91831	109100	108700
	Իջևան	112558	116200	116000
	Բերդ	49700	58050	57200
	Դեկտեմբերյան	40200	46500	45700
	Այրում	24684	29000	28000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. դեկտեմբերի համեմատ, աճել են 0.5%-ով:

2013թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 313 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 85, մարզերում միասին վերցրած՝ 228: 2013թ. հունվարին, 2012թ. դեկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 43.1%-ով, ընդ որում Երևանում՝ 46.9%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 41.5%-ով: 2012թ. հունվարի համեմատ՝ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 25.5%-ով, ընդ որում Երևանում՝ 16.7%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 28.3%-ով:

2013թ. հունվարին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են

հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները/դրամ/		
	հունվար 2012թ.	հունվար 2013թ.	դեկտեմբեր 2012թ.
Կենտրոն	459800	471100	470700
Արաբկիր	370100	378100	377400
Քանաքեռ Զեյթուն	275000	291100	290000
Նորք Մարաշ	302000	314000	313700
Ավան	249100	267050	266800
Էրեբունի	219800	235000	234400
Շենգավիթ	239500	251000	250600
Դավթաշեն	258000	271700	271100
Աջափնյակ	236800	244100	243800
Մալաթիա Սեբաստիա	220500	234300	234300
Նուբարաշեն	144800	147600	147300
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	270500	282300	281800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. հունվարին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. դեկտեմբերի համեմատ աճել են 0.2%:

2013թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հունվար 2012թ.	հունվար 2013թ.	դեկտեմբեր 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	130000	135100	135000
	Ապարան	53000	58800	57900
	Թալին	71550	68650	68650
Արարատ	Արտաշատ	102600	98900	98800
	Մասիս	113950	114000	113800
	Վեդի	100200	101400	101000
	Արարատ	89100	87700	87500
Արմավիր	Վաղարշապատ	146400	152300	152300
	Արմավիր	100900	106500	106500
Գեղարքունիք	Սևան	93500	94200	94200
	Գավառ	46100	56700	55700
	Մարտունի	90850	94600	94500
	Վարդենիս	35000	39000	38000
	Ճամբարակ	26100	29850	28950
Լոռի	Վանաձոր	96000	98800	98500
	Ստեփանավան	87100	88400	88200
	Սպիտակ	111500	113600	113600
	Ալավերդի	42150	48300	48200
	Տաշիր	52000	51900	51500
	Թումանյան	13000	12000	12000
	Շամլուղ	13200	13200	13200
	Ախթալա	29400	29600	29600

Կոտայք	Աբովյան	143700	154700	154700
	Նոր Հաճն	129000	129800	129800
	Բյուրեղավան	120100	120000	120000
	Եղվարդ	115600	116100	116100
	Հրազդան	77000	82400	81600
	Ծաղկաձոր	303800	305000	305000
	Չարենցավան	75000	82500	82500
Շիրակ	Գյումրի	116500	118000	117800
	Արթիկ	60100	63100	62900
	Մարալիկ	48000	51700	51150
Սյունիք	Գորիս	127000	129100	128400
	Կապան	98000	98700	98500
	Սիսիան	88000	93400	92500
	Մեղրի	75000	83000	81800
	Ագարակ	46100	46900	46700
	Դաստակերտ	11600	11610	11610
Վայոց Ձոր	Վայք	83000	89000	88000
	Եղեգնաձոր	110300	116600	116000
	Ջերմուկ	119000	129400	127000
Տավուշ	Դիլիջան	103200	111100	110500
	Իջևան	120000	122000	122000
	Բերդ	58000	59000	59000
	Դեկտեմբերյան	46400	46100	46100
	Այրում	34800	34600	34600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. դեկտեմբերի համեմատ, աճել են 0.3%-ով:

Ընդհանուր առմամբ, 2013թ. հունվարին հանրապետությունում օտարվել են 1107 միավոր /688.62 հա/ հողեր, որից Երևանում՝ 73 միավոր /5.98 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 625 միավոր /649.79 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /1.27 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 327 միավոր /24.64 հա/, որից Երևանում՝ 47 միավոր /1.68 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 135 միավոր /10.06 հա/, որից Երևանում՝ 20 միավոր /3.01 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 13 միավոր /2.37 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.02 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 3 միավոր /1.66 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 3 միավոր /0.11 հա/,
- ջրային հողեր՝ 0.001 հա ընդհանուր մակերեսով:

2013թ. հունվարին հանրապետությունում օտարված հողերից 941 միավորի /394.20 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 61 միավոր /3.36 հա/, նվիրատվության գործարքներ՝ 160 միավորի /292.49 հա/, որից Երևանում՝ 10 միավոր /1.56 հա/ և փոխանակության գործարքներ՝ 6 միավորի /1.93 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /1.06 հա/:

Հանրապետությունում 2013թ. հունվարին, 2012թ. հունվարի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 14.9%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 16.7%-ով,

բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 14.9%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 85.7%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 111.69 հա, որից 107.10 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 30.4%-ը կամ 286 գործարքներ /101.90 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 32 միավոր /1.08 հա/, իսկ 68.3%-ը կամ 643 միավորը /291.06 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 29 միավոր /2.28 հա/: 2013թ. հունվարին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 12 գործարք /1.24 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2013թ. հունվարին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող															
	Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր			
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/						
Երևան	0	0.00	0	0.00	20	0.17	12	0.90	4	0.99	1	0.02	20	0.97	4	0.29								
Արագածոտն	60	41.47	0	0.00	0	0.00	18	3.10	66	57.07	0	0.00	13	0.98	2	0.02								
Արարատ	10	15.25	0	0.00	3	0.31	7	0.16	60	22.71	1	0.004	25	2.45	5	0.16								
Արմավիր	6	24.21	1	0.05	2	0.08	8	0.20	106	82.89	0	0.00	37	4.08	5	0.17								
Գեղարքունիք	2	0.80	0	0.00	5	0.49	2	0.09	47	34.58	1	0.01	24	2.76	3	0.73								
Լոռի	1	0.07	0	0.00	7	0.12	10	0.12	12	7.15	1	0.44	3	0.39	0	0.00								
Կոտայք	8	2.74	1	0.11	37	1.34	18	0.33	82	40.99	3	0.30	37	2.89	7	0.27								
Շիրակ	3	1.44	0	0.00	1	0.003	4	0.04	22	15.66	2	0.44	11	0.66	1	0.04								
Սյունիք	2	3.05	0	0.00	2	0.03	4	0.12	8	7.05	1	0.01	2	0.25	1	0.07								
Վայոց Ձոր	4	2.13	0	0.00	1	0.04	5	0.19	0	0.00	0	0.00	7	0.63	1	0.002								
Տավուշ	0	0.00	1	1.00	13	1.04	3	0.01	2	0.60	0	0.00	13	1.27	2	1.01								
Ընդամենը	96	91.16	3	1.16	91	3.62	91	5.26	409	269.69	10	1.22	192	17.33	31	2.76								

Ստորև ներկայացվում է 2013թ. հունվարին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

Ընդամենը	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Արդյուն ար օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր					
			բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակ կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակ կառուցապ. հողերի			
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	24	0.79	0	0.00	19	0.13	5	0.66	8	0.28	0	0.00	0	0.00	1	0.04	7	0.24
Արագածոտն	16	2.74	0	0.00	0	0.00	16	2.74	11	23.36	9	23.00	0	0.00	0	0.00	2	0.36
Արարատ	2	0.01	0	0.00	0	0.00	2	0.01	17	15.33	9	14.87	0	0.00	3	0.31	5	0.15
Արմավիր	3	0.06	0	0.00	1	0.02	2	0.04	14	24.47	6	24.21	1	0.05	1	0.05	6	0.16
Գեղարքունիք	3	0.30	0	0.00	3	0.30	0	0.00	5	0.55	1	0.27	0	0.00	2	0.19	2	0.09
Լոռի	4	0.014	0	0.00	2	0.004	2	0.01	14	0.29	1	0.07	0	0.00	5	0.11	8	0.11
Կոտայք	5	0.24	0	0.00	2	0.20	3	0.04	59	4.28	8	2.74	1	0.11	35	1.14	15	0.29
Շիրակ	2	0.004	0	0.00	1	0.003	1	0.001	6	1.48	3	1.44	0	0.00	0	0.00	3	0.04
Սյունիք	2	0.03	0	0.00	2	0.03	0	0.00	6	3.17	2	3.05	0	0.00	0	0.00	4	0.12
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	10	2.36	4	2.13	0	0.00	1	0.04	5	0.19
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	17	2.05	0	0.00	1	1.00	13	1.04	3	0.01
Ընդամենը	61	4.19	0	0.00	30	0.69	31	3.50	167	77.62	43	71.78	3	1.16	61	2.92	60	1.76

2013թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 53 գործարք /19.37 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2013թ. հունվարին, 2012թ. հունվարի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 2.6 անգամ: Ընդ որում, Երևանում՝ աճել է 8-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ աճել է 2.5 անգամ: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 79.2%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել է 2.7 անգամ, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 3.5 անգամ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 3-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. հունվարին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	2	0.90	60.0	60.0	60.0	22	17.01	365.0	12000.0	3615.0
Ապարան						5	2.03	86.5	2727.3	718.5
Թալին	5	18.85	37.7	38.1	37.9	26	14.12	93.6	5494.5	642.3
Ծաղկահովիտ	2	3.26	193.2	381.4	287.3	7	21.08	79.5	1000.0	265.5
Արարատի մարզ										
Արտաշատ	1	1.39	4487.8	4478.8	4478.8	26	7.62	335.1	10833.3	2800.0
Մասիս						12	4.74	200.0	11904.8	3200.0
Վեդի	8	13.48	60.6	725.0	156.5	16	6.71	207.0	10795.1	1854.7
Արմավիրի մարզ										
Արմավիր	4	18.41	60.5	1059.2	561.2	65	36.16	294.3	9090.0	1455.3
Բաղրամյան						11	33.90	90.6	2561.1	780.0
Վաղարշապատ	2	5.80	622.2	1244.3	933.2	22	9.31	444.4	11764.7	2415.0

Գեղարքունիքի մարզ										
Գավառ						2	0.57	199.8	1875.0	410.0
Ճամբարակ	1	0.27	180.6	180.6	180.6	38	25.68	60.5	953.3	348.2
Մարտունի						4	1.00	51.1	2850.0	735.5
Սևան								52.2	2134.8	318.5
Վարդենիս						3	7.33	41.2	2575.1	405.3
Լոռու մարզ										
Ալավերդի	1	0.07	490.1	490.1	490.1	2	1.09	170.4	6424.2	610.0
Գուգարք								234.6	6065.9	751.3
Սպիտակ								250.0	5555.5	732.3
Ստեփանավան						6	3.56	90.6	1686.6	312.3
Տաշիր						3	1.77	45.3	1384.4	150.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	7	1.74	168.4	3086.7	1218.1	31	17.88	279.3	11942.7	4464.1
Եղվարդ						28	7.89	174.4	11971.8	2668.8
Հրազդան	1	1.00	522.0	522.0	522.0	23	15.22	130.5	10256.4	1770.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						5	5.41	252.0	1693.1	608.3
Ամասիա						1	2.96	40.9	261.0	128.5
Անի						5	1.36	110.6	546.9	374.5
Աշոցք	3	1.44	66.6	238.9	124.5	3	1.44	58.5	215.8	126.1
Արթիկ						8	4.48	79.4	1428.6	400.0
Սյունիքի մարզ										
Գորիս						1	0.15	92.6	1023.2	718.0
Կապան	2	3.05	420.0	494.5	457.3	1	0.68	120.0	841.6	350.0
Մեղրի						1	0.25	193.0	3000.0	725.5
Սիսիան						5	5.97	46.3	1977.4	530.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	4	2.13	41.8	633.7	423.3			125.0	10000.0	1900.0
Վայք								58.8	1430.7	625.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	0.38	213.3	3783.8	675.3
Իջևան						1	0.22	267.5	9454.5	1235.5
Դեկտեմբերյան								46.7	7368.4	860.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. հունվարին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						13	9777.0	130.7	22200.0	2575.0
Ապարան								124.1	609.6	389.2
Թային								63.2	1454.8	152.4
Ծաղկահովիտ								60.0	214.3	87.0
Արարատի մարզ										
Արտաշատ	3	3102.7	538.1	849.7	745.0	7	6367.4	173.9	7140.3	894.3
Մասիս						5	3460.0	187.5	25000.0	1209.0
Վեդի						13	14721.0	126.1	5000.0	661.0

Արմավիրի մարզ										
Արմավիր						13	18305.0	131.6	9090.9	1215.1
Բարդամյան								100.0	833.3	239.1
Վաղարշապատ	1	532.0	2009.7	2009.7	2009.7	24	22481.0	197.4	26528.4	1527.0
Գեղարքունիքի մարզ										
Գավատ						6	6955.7	186.6	1084.3	675.0
Ճամբարակ						1	437.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	1	1200.0	219.8	219.8	219.8	16	18161.6	119.3	5000.0	281.2
Սևան						1	2030.0	240.0	3110.4	312.0
Վարդենիս	1	697.5	66.6	66.6	66.6			72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի								114.3	1388.9	216.6
Գուգարք	5	1114.2	2009.7	4976.4	2895.2	2	1896.0	77.9	14083.3	1160.0
Սպիտակ								104.9	1348.3	206.0
Ստեփանավան						1	2000.0	88.2	1666.7	175.5
Տաշիր								45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	23	1948.0	3087.0	5854.1	4630.8	14	10884.5	264.5	35353.5	1982.3
Եղվարդ						17	14202.0	173.6	27000.0	2853.8
Հրազդան	12	9446.0	2611.7	4425.0	2886.7	6	3780.0	117.7	34848.5	1318.2
Շիրակի մարզ										
Ախուրյան						4	2574.0	113.6	18750.0	333.1
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի						2	1316.0	67.9	180.6	165.3
Աշոցք								40.8	144.0	63.2
Արթիկ						5	2680.0	111.8	5000.0	216.6
Սյունիքի մարզ										
Գորիս						2	2495.0	112.2	1700.0	367.9
Կապան								67.9	2638.9	300.0
Մեղրի								68.5	632.9	203.5
Սիսիան								123.5	875.0	204.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						7	6301.5	96.7	7659.6	501.8
Վայք	1	400.0	1312.5	1312.5	1312.5			120.7	1448.3	208.0
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	112.0
Իջևան	13	10415.7	580.8	3000.0	2630.0	12	11484.5	74.1	14423.1	523.3
Դեկտեմբերյան						1	1240.0	125.0	1948.1	225.0

2013թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 566 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.7%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 69.8%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2013թ. հունվարին, 2012թ. դեկտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 29.1%-ով, իսկ 2012թ. հունվարի համեմատ՝ 19.7%-ով:

2013թ. հունվարին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 47 բնակարանների, 61 անհատական բնակելի տների, 239 հասարակական, 65 արտադրական նշանակության օբյեկտների, 142 հողերի և 12 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2013թ. հունվարին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 14 վարձակալության գործարքների, այդ թվում 13 միավոր /0.04 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2012թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 46.7%-ով, իսկ 2012թ. հունվարի համեմատ աճել՝ 2.0 անգամ: 2013թ. հունվարին հանրապետությունում վարձակալված 241.02 հա հողերից 0.24 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 240.78 հա հողերից 196.63 հա կազմում են գյուղատնտեսական

նշանակության, 5.91 հա արդյունաբերական օբյեկտների, 32.49 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Գեղարքունիքի մարզում՝ 97.16 հա, որից 96.00 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 894 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.0%ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 63.1%-ով, իսկ 2012թ. հունվարի համեմատ աճել՝ 74.3%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /48.3%/, առանձնատների /22.8%/, հասարակական նշանակության օբյեկտների /13.5%/ և հողերի /8.4%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 512 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. դեկտեմբերի համեմատ, նվազել է 60.8%-ով, իսկ 2012թ. հունվարի համեմատ աճել՝ 59.0%-ով:

2013թ. հունվարին հանրապետությունում գրավադրվել են 148.10 հա հողեր, որից 54.18 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 80.2%-ը կամ 68.53 հա գյուղատնտեսական նշանակության են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 31.93 հա, որից 31.73 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. հունվարին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 69 գործարքներ, որից 42-ը՝ Երևանում: 2012թ. դեկտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն նվազել է 66.7%-ով, ընդ որում Երևանում՝ 70.2%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 59.1%-ով: 2012թ. հունվարի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 3.5 անգամ, ընդ որում Երևանում՝ 3.2 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած՝ 3.9 անգամ:

2013թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1186 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2012թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 59.4%-ով, իսկ 2012թ. հունվարի համեմատ՝ 17.6%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 11.9%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /32.3%/:

« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե